

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու
պատմություն» առարկայի
մարզային փուլ
9-րդ դասարան - 120 րոպե
№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞վ էր հրեաների առաջին թագավորը: *(0,5 միավոր)*
- ա) Մովսես
 - բ) Սավուղ
 - գ) Դավիթ
 - դ) Սողոմոն
2. Ո՞ր եկեղեցին չի պատկանում Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքին:
- ա) Հունական *(0,5 միավոր)*
 - բ) Եթովպական
 - գ) Ասորի
 - դ) Ղպտի
3. Քանի՞ նվիրապետական աստիճան ունի Հայ եկեղեցին: *(0,5 միավոր)*
- ա) 6
 - բ) 7
 - գ) 8
 - դ) 9
4. Ո՞ր լեզուներով էին կատարվում ժամերգությունները մինչև գրերի գյուտը:
- ա) արամերեն և հունարեն *(0,5 միավոր)*
 - բ) հայերեն և ասորերեն
 - գ) հունարեն և ասորերեն
 - դ) ասորերեն և արամերեն
5. Ո՞վ է հաջորդել Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսին: *(0,5 միավոր)*
- ա) Հովսեփ Ա Հողոցմեցի
 - բ) Հովհաննես Ա Մանդակունի
 - գ) Բաբկեն Ա Ոթմսեցի
 - դ) Ներսես Բ Բագրևանդցի

6. Ո՞ր եկեղեցում Սմբատ Արծրունին օծվեց որպես հայոց թագավոր: (0,5 միավոր)

- ա) Անիի Մայր տաճար
- բ) Կարսի Ս. Առաքելոց
- գ) Անիի Տիգրան Հոնենցի
- դ) Աղթամարի Ս. Խաչ

7. Ո՞վ է իր բանաստեղծություններում հայ ժողովրդին ի զեն կոչում: (0,5 միավոր)

- ա) Հակոբ սարկավազ Ղևոնդյան
- բ) Եղիշե քահանա Խաչատրյան
- գ) Քերոբ քահանա Շահնագարյանը
- դ) Ներսես վարդապետ Խարախանյան

8. Ո՞ր կաթողիկոսին են պատկանում այս խոսքերը. «Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր Աթոռը»:

(0.5 միավոր)

- ա) Գևորգ Ե Սուրենյանց
- բ) Խորեն Ա Մուրադբեկյան
- գ) Գևորգ Զ Չորեքյան
- դ) Մկրտիչ Ա Վանեցի

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. _____ մարզարեն խոսելով Երվանդունյաց Հայաստանի մասին, այն անվանում է Այրարատյան թագավորություն: (1 միավոր)

10. Մկրտության ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ արքային վերանվանել է _____: (1 միավոր)

11. Հարություն քահանա Շմավոնյանը սկսում է հրատարակել հայկական առաջին պարբերականը՝ «_____»: (1 միավոր)

12. 1808 թ. մայիսին հրավիրվում է մի ժողով, որը ստանում է _____ կամ «Կառավարիչ Ս. Ժողով» անունը: (1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Իրադարձությունները համապատասխանեցնել գործիչներին. (1 միավոր)

- 1. 1178թ. Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը
- 2. 1243 թ. Սսի եկեղեցական ժողովը

3. Կոնդակով միարարներին լատինական ծեսով պատարագ և մկրտություն կատարելու արգելքը

4. 1019թ. Սարգիս կաթողիկոսի ձեռքով ձեռնադրված կաթողիկոսը

ա) Հակոբ Բ Անավարզեցի

բ) Սարգիս Ա Սևանցի

գ) Պետրոս Ա Գետադարձ

դ) Գրիգոր Դ Տղա

ե) Հեթում Ա և Կոստանդին Ա Բարձրբերդցի

1	
2	
3	
4	

14. Բառերը համապատասխանեցնել իմաստներին.

1. ճգնավոր

(1 միավոր)

2. մարտիրոս

3. հնձան

4. ուրկանոց

ա) գինի պատրաստելու համար նախատեսված տնակ

բ) ապաստարան բորոտների համար

գ) վկա

դ) խոստովանող

ե) անապատական

1	
2	
3	
4	

№ 15-16

***Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝
յուրաքանչյուրը 5 փաստից***

15. Ասատվածաշնչային դեմքերը համապատասխանեցնել ըստ իրեց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

(1 միավոր)

ա) Իսահակ

բ) Մովսես

գ) Դավիթ

դ) Հակոբ

ե) Սողոմոն

1	
2	
3	
4	
5	

16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա) Եդբայրական օգնության Էջմիածնի կոմիտեի հիմնադրումը

(1 միավոր)

բ) Խորեն Մուրադբեկյանի նշանակվելը կաթողիկոսական տեղապահ

գ) Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կանոնադրության հաստատումը

դ) Խանասորի արշավանքը

ե) Սկյուտարի ճեմարանի հիմնադրումը

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Զգալով ամբողջ հայության աջակցությունը՝ Գևորգ Ե կաթողիկոսը դիմում է Կովկասի փոխարքային՝ կոնգրեսի 61-րդ հոդվածն իրականացնելու համար:

1) Ո՞վ էր փոխարքան: (1 միավոր)

2) Ո՞ր կոնգրեսի մասին է խոսքը: (1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. (1 x 2 = 2 միավոր)

1) Քաղկեդոնի ժողովը ընդունեց միաբնակ դավանաբանական բանաձևը:

2) Բարսեղ Անեցին թողնում է Անին և հաստատվում է Սսում:

3) Գող Վասիլի իշխանության քայքայումը ստիպում է Գրիգոր Գ-ին հայրապետական Աթոռը տեղափոխել Ծոփք:

4) Ամբերդի եպիսկոպոսությունը հիմք հանդիսացավ Արագածոտնի թեմի համար:

5) Աբգար դպիր Եվդոկացին սերում էր Բագրատունյաց ընտնաիքից:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսը Պետրոս Գետադարձ կաթողիկոսին չեն վերաբերում. (1 X 2 = 2 միավոր)

1) Տրապիզոնում կատարում է ջրօրհներ:

2) Լուծարեց Բջնիի եպիսկոպոսական աթոռը:

3) Նա օժտված էր գրական-երաժշտական շնորհով:

4) Նա գահակալեց 27 տարի:

5) Նա պատվիրել է «Բագրատունյաց պատմություն» երկը:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և գնահատել Հայոց եկեղեցու դերը հայկական դպրոցների վերաբացման համար մղված պայքարում (XIX դ. վերջ):